ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԻ ԲԱԳԻՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СУРЕН САРГИСОВИЧ БАГИНЯН

ОССОБЕННОСТИ МЕТОДИКИ РАССЛЕДОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 – Судебное право: судоустройство; гражданский процесс; уголовный процесс; криминалистика; судебная экспертиза; адвокатура; теория оперативно-розыскной деятельности.

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահե Գուրգենի Ենգիբարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Աղվանի Դիլբանդյան

իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
Գևորգ Սուրենի Բաղդասարյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 22-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ ժ. Ա. Ստեփանյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: Заслуженный юрист РА,
доктор юрид. наук, профессор
Ваге Гургенович Енгибарян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Самвел Агванович Дилбандян

кандидат юрид. наук, ассистент
Геворг Суренович Багдасарян

Ведущая организация: **Образовательний комплекс
министерства внутренних дел РА**

Защита состоится 22 июня 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 22 мая 2026 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում հատկապես մեր տարածաշրջանում պետական դավաճանության տեսակի հանցագործությունները հասարակական առավել մեծ վտանգ են ներկայացնում ոչ միայն այն պատճառով, որ վտանգում են երկրի պաշտպանունակությունը՝ ոտնձգելով պետության սահմանադրական կարգի և անվտանգության դեմ, այլ նաև՝ հասարակության մեջ ձևավորում են որոշակի բացասական պատկերացումներ պետական մարմինների աշխատանքի, հայրենասիրական դաստիարակության և այլնի վերաբերյալ: Ասվածը հատկապես ընդգծվում է վերջին տարիներին առավել հաճախ բացահայտված դավաճանական գործողությունների դեպքերի ֆոնին: Անշուշտ, այս տեսակ հանցագործությունների հիմնական մասը բացահայտվել է 2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից հետո, երբ հետպատերազմական իրադրությունում վերլուծվում էին բացթողումներն ու թերացումները: Այսպես, համեմատության համար նշենք, որ եթե 2020-2021 թթ. Հայաստանի Հանրապետությունում պետական դավաճանության հանցակազմով քննվել են մեկական քրեական գործեր [վարույթներ], ապա 2022 թվականին՝ 24, իսկ 2023 թվականին՝ 9 գործ: ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ 2024-2025 թթ. ընթացքում նախաձեռնվել է 12 քրեական վարույթ, որից 7 վարույթ ուղարկվել է դատարան, մնացածով քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Հատկանշական է, որ վերջին տարիներին ՌԴ-ում նույնպես գրանցվել են պետական դավաճանության դեպքերի աճ, ինչը վկայում է տարածաշրջանային ռազմա-քաղաքական վիճակի ու այս տեսակ հանցագործությունների աճի շարժընթացի վրա դրա ազդեցության մասին, որն էլ պայմանավորված է մրցող կամ հակառակորդ երկրների կողմից միմյանցից առավելագույնս տեղեկատվություն ձեռք բերելու ձգտմամբ: Այսպես, Գերագույն դատարանին կից գործող դատական դեպարտամենտի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2009-2013 թթ. ընթացքում պետական դավաճանության և լրտեսության համար ՌԴ-ում դատապարտվել է 25 անձ: Սակայն, 2014 թվականից ի վեր նկատվում է նման գործերի աճ: Այսպես, միայն 2015 թվականին կայացվել է 15 նման դատավճիռ, իսկ 2021 թվականին՝ 17: 2023 թվականի առաջին եռամսյակում արդեն իսկ հարուցվել է գրեթե նույնքան գործ պետական դավաճանության վերաբերյալ, որքան ողջ նախորդ տարվա ընթացքում: Ներկայումս հայտնի է նվազագույնը 21 քրեական գործի մասին:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին առավել տարածված են պետական դավաճանության այնպիսի դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության հետ հակամարտության մեջ գտնվող պետությունների հատուկ ծառայությունները փորձում են մասշտաբային հավաքագրումներ իրականացնել այն քաղաքացիներից, ովքեր գտնվում են զինվորական ծառայության մեջ կամ

առնչություն ունեն ՀՀ զինված ուժերի հետ, և ովքեր խեղաթյուրված պատկերացում ունեն կատարվող իրադարձությունների վերաբերյալ և կարող են պետական դավաճանության սուբյեկտներ դառնալ: Թերևս հարկ է նշել, որ առանձին դեպքերում մեր հայրենակիցները գիտակցաբար են դիմում նման քայլի՝ անձնական շահը գերադասելով պետության շահերից:

Այդպիսով, ներկայումս առավել քան երբևէ օրվա հրամայական է դարձել այն հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը, որոնք ապահովում են պետության, ազգային անվտանգության հիմքերը: Այս պարտավորության արդյունավետ իրականացման երաշխիք են ոչ միայն պետական դավաճանության հանցավոր դրսևորումների դեմ պայքարող ՀՀ ազգային անվտանգության ծառայության համապատասխան մարմինների գործունեությունը, այլ նաև՝ պետական դավաճանության դեպքերով քրեական վարույթների քննության արդյունավետ մեթոդիկայի մշակումը:

Թեև մասնագիտական գրականության աղբյուրներում առկա են ոչ մեծաքանակ գիտական աշխատանքներ, որոնցում բացահայտված են պետության սահմանադրական կարգի և անվտանգության քրեաիրավական պաշտպանության խնդիրները, այդուհանդերձ խնդրո առարկայի կրիմինալիստիկական ասպեկտը շարունակում է մնալ գիտական հետազոտությունների հետաքրքրության շրջանակում: Ներկայումս հատկապես հայրենական մասնագիտական գրականության մեջ պետական դավաճանությունների քննության մեթոդիկայի, դրա կատարելագործման, խնդրի համակարգված և հետազոտական համակողմանի քննության ենթարկված աշխատանքների ակհայտ պակաս է զգացվում, առավել ևս եթե հաշվի առնենք, որ այս տեսակ գործերի քննությունը բացառապես իրականացվում է դռնփակ պայմաններում, ինչը հնարավորություն չի տալիս առանձին հետազոտողների լիարժեք ուսումնասիրել վարույթների նյութերը, ամփոփել և մշակել հանձնարարականներ: Այդուհանդերձ պետական դավաճանության քրեական վարույթների քննության հեղինակի ամնիջական փորձը թույլատրելիի սահմաններում կիրառվել է սույն ատենախոսության շրջանակներում:

Թեմայի վերաբերյալ առանձին ասպեկտներ ուսումնասիրված են գիտական որոշ աշխատանքներում, սակայն դրանցում հիմնականում շոշափվում են պետական դավաճանությունների քրեաիրավական առանձին հիմնախնդիրներ, մինչդեռ դրանց քննության հիմնախնդիրներին նվիրված ամբողջական աշխատություն բաց աղբյուրներում գրեթե առկա չէ, իսկ հայրենական մասնագիտական գրականության մեջ ընհանրապես ուսումնասիրված չէ:

Այնուամենայնիվ, թե՞ տեսական և թե՞ գործնական մակարդակում պետական դավաճանությունների քննության համապարփակ մեթոդիկայի մշակման համար հետազոտություններ իրականացնելու լուրջ կարիք է զգացվում՝ հատկապես նկատի ունենալով ՀՀ-ում վերջին տարիներին

քննարկվող տեսակի հանցագործությունների աճի լուրջ շարժընթացը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակը պետական դավաճանության քննության համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և - գործնական հիմնախնդիրների վերհանումը, ինչպես նաև կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների և դրանց քննության մեթոդիկայի կատարելագործման ուղությամբ առաջարկությունների մշակումն է:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար խնդիրներ են դրվել.

- Պետական դավաճանության քրեաիրավական բնութագրի հիման վրա բացահայտել դրա կրիմինալիստիկական բնութագրի տարրերն ու բովանդակությունը:

- Վեր հանել պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի կառուցվածքն ու բովանդակությունը:

- Բացահայտել պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի տիպային մոդելները:

- Ուսումնասիրել և հստակեցնել պետական դավաճանության քննության ընթացքում պարզաբանման ենթակա հիմնական և մյուս հանգամանքների շրջանակը:

- Վեր հանել պետական դավաճանության դեպքերով քրեական վարույթների նախաձեռնման փուլի առանձնահատկությունները:

- Պարզաբանել պետական դավաճանության քննության ընթացքում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցության իրավական, կազմակերպական հիմքերը և այդ առնչությամբ անել այն առավել արդյունավետ դարձնելուն միտված համապատասխան առաջարկներ:

- Վերլուծել պետական դավաճանությունների կանխման հատուկ միջոցները և միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ արդյունավետորեն տեղայնացնել դրանք:

- Պետական դավաճանության քննության համատեքստում քննարկել օպերատիվ-հետախուզական գործունեության նշանակությունը և այս իմաստով առաջարկել քննչական մարմինների հետ առավել ներդաշնակ համագործակցությունն ապահովող կառուցակարգեր:

- Բացահայտել պետական դավաճանությունների քննությանը բնորոշ տիպային քննչական իրավիճակները և ըստ այդմ մշակել քննության պլանավորման ուղղությունները:

- Վեր հանել և վերլուծել առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկայի հիմքերն ու առանձնահատկությունները:

- Մշակել պետական դավաճանության քննության ընթացքում գաղտնի

քննչական գործողությունների ալգորիթմը:

- Բացահայտել պետական դավաճանության քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման տեխնոլոգիան ու հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը պետական դավաճանության քննության մեթոդիկայի համատեքստում տակտիկապես գրագետ վարույթն իրականացնելու նպատակով օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների փոխգործողության հետ կապված հարաբերություններն են: Հետազոտության առարկան պետական դավաճանության քրեական վարույթի պատշաճ կազմակերպմանը, քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համագործակցությանը վերաբերող իրավական նորմերն են, միջազգային լավագույն փորձը, առկա իրավակիրառ պրակտիկան և դրան վերաբերելի դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Պետական դավաճանության քննությանը առհասարակ վերաբերող առանձին ինստիտուտներ հետազոտության են ենթարկվել հայ և արտասահմանյան մի շարք հեղինակների գիտական աշխատություններում, դարձել են նաև ատենախոսությունների քննության առարկա: Այդ ուսումնասիրությունների շարքում պետք է ընդգծել մասնավորապես Ա. Գ. Կուլևի, Ա. Վ. Նեստերովի, Մ. Յու. Միլևայի, Կ. Դ. Նիկոլաևի, Ա. Ս. Սելյուկովի, Ի. Մ. Սերեդայի, Ս. Ա. Ստուպինայի, Ա. Ա. Ուստինովի, Դ. Վ. Ցարևի, Ս. Պ. Բալանյանի, Ռ. Ս. Բելկինի, Ս. Ի. Գերասիմովի, Ի. Մ. Գուտկինի, Ա. Ռ. Ռատինովի, Լ. Պ. Օհանյանի, Վ. Գ. Ենգիբարյանի, Ա. Ս. Չախոյանի և այլոց աշխատությունները:

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյանի, պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյանի համահեղինակությամբ և խմբագրությամբ հրատարակված դասագրքերը և գիտական այլ հրատարակություններ կազմում են սույն հետազոտության տեսական հիմքը:

Չնայած դրան՝ հարկ է նկատել, որ հայրենական կրիմինալիստիկայի գիտության մեջ դեռևս բացակայում է պետական դավաճանության քննության մեթոդիկային նվիրված համընդգրկուն աշխատություն:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են պետական դավաճանության քննությանը, քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործակցությանը առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը և դատական պրակտիկայի նյութերը, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն է համապարփակ մոտեցումը, որը թույլ է տալիս բազմակողմանի դիտարկել վերաբերելի խնդիրները, ներկայացնել պետական դավաճանությունների քննության բուն մեթոդիկան՝

որպես փոխկապակցված քննչական գործողությունների հետևողական ընթացակարգ:

Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է ինչպես համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, այնպես էլ հատուկ՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների օգտագործմամբ, որոնք թույլ են տալիս բացահայտել տվյալ խնդրի կրիմինալիստիկական ասպեկտը:

Միևնույն ժամանակ կատարվել են հարցումներ պետական դավաճանության քրեական վարույթներ քննած թվով 14 քննիչների, ինչպես նաև դրանց քննությանը ներգրավված 18 օպերատիվ աշխատակիցների շրջանում, որոնց արդյունքներն ամփոփվել և օգտագործվել են ատենախոսության նյութի շարադրանքի մեջ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել պետական դավաճանության ինստիտուտի կրիմինալիստական ասպեկտներին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրները: Ընդ որում, նշված վերլուծությունները կատարվել են՝ հիմնվելով ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերի, վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած կարծիքների, ՀՀ - սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի և դատական պրակտիկայի, վերաբերելի միջազգային փաստաթղթերի համակարգային ուսումնասիրության վրա:

Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրի էությունը, դրա դրսևորման հանցավոր մեխանիզմի տարրերը քրեական վարույթներով քննության պլանավորումը, կազմակերպումը, հանզակազմից բխող քրեական վարույթներ նախաձեռնելու առանձնահատկությունները, այս կապակցությամբ քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործակցության իրավական, կազմակերպական հիմքերը, մեթոդական չափորոշիչները, գործող իրավական կառուցակարգերը, այդ թվում՝ այս համատեքստում օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական բնույթն ու նշանակությունը: Միևնույն ժամանակ տեսական դրույթների ու քննչական պրակտիայի վերլուծության արդյունքում առաջին անգամ բացահայտվել և առանձնացվել են պետական դավաճանության

հանցավոր մեխանիզմի տիպային մոդելները, պարզաբանման ենթակա հիմնական հանգամանքները, որոնք ուղենիշային, մոդելային նշանակություն ունեն քննության մեթոդիկայի ձևավորման համար:

Առաջին անգամ ատենախոսության մակարդակում քննարկվել և վերլուծվել են հանցագործությունների քննության առնչությամբ իրավապահ առաքելություն իրականացնող մարմինների աշխատանքի համակարգման և -փոխգործողության առանձնահատկությունները նաև համապատասխան ոլորտային մեթոդիկայի մշակման դիտանկյունից: Արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական ու գործնական առաջարկներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Պետական դավաճանությունը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, որի հանրային վտանգավորությունն այն է, որ հանցավոր գործողություններն ուղղված են Հայաստանի Հանրապետության ինքնավարության, տարածքային ամբողջականության և անձեռնմխելիության դեմ, ինչն իր հերթին վտանգում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը: Նման պայմաններում պետության համար օրվա հրամայական է ոչ միայն դավաճանական գործողությունների ճշգրիտ քրեականացմանը, համարժեք պատասխանատվության ու պատժի սահմանմանը, այլ նաև այդ դեպքերի լիարժեք քննության ապահովմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը: Այս իմաստով կատարված հետազոտության շրջանակներում հիմնավորվել է, որ պետական դավաճանության համար քրեական պատասխանատվություն սահմանող << քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի դիսպոզիցիայի ձևակերպումը լրացման կարիք ունի ինչպես արարքի ճիշտ որակման, պատասխանատվության անխուսափելիության, այնպես էլ դրանց քննության լիարժեքության և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Այսպես.

1) *Անհրաժեշտ է << քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի դիսպոզիցիան լրացնել հետևյալ արտահայտությամբ՝ «պետական գաղտնիք պարունակող կամ <u>այդպիսին չհամարվող</u> տեղեկությանը ծանոթանալու համար պայման ստեղծելը», քանի որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ այն տեղեկությունները, որոնց ծանոթացման համար << քաղաքացին պայման է ստեղծել, թեև չեն հանդիսանում պետական գաղտնիք, այդուհանդերձ օտարերկրյա հատուկ ծառայությունների տիրապետության տակ հայտնվելու պարագայում դրանք կարող են լուրջ վնաս հասցնել << ինքնիշխանությանը, տարածքային անձեռնամխելիությանը և արտաքին անվտանգությանը:*

2) Անհրաժեշտ է << քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի դիսպոզիցիայում կատարել լրացում՝ սահմանելով, որ՝ «թշնամու կողմն անցնելը սույն հոդվածի իմաստով օտարերկրա պետության, միջազգային կազմակերպության զինված ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության դեմ զինված

հակամարտությունում կամ ռազմական գործողությունում կամ ռազմական տեխնիկայի և զենքի գործադրմամբ այլ գործողություններում անձի մասնակցությունն է», քանի որ օրենսդրորեն սահմանված չէ թշնամի հասկացությունը:

3. Պետական դավաճանության քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի համադրումը հնարավորություն է տալիս բացահայտելու դրանց դրսևորման կրիմինալիստիկական մեխանիզմի օրինաչափություններն ու բնութագրական առանձնահատկությունները: Ընդ որում, պետական դավաճանության կատարման եղանակի առանձնահատուկ բնույթով պայմանավորված՝ վերջինիս դրսևորման մեխանիզմին առավել բնորոշ են հանցավոր իրադրության տարրերը հատկապես հանցավոր մտադրության իրականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու տեսանկյունից: Հատկանշական է, որ պետական դավաճանության պարագայում այդ գործընթացը կարող է սկսվել հանցավոր մտադրությունն անձի մոտ գեներացնելու փուլից և շարունակվել մինչև դրա ավարտը:

Վերոգրյալը հիմք ընդունելով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ-ում վերջին տարիներին բացահայտված պետական դավաճանության դեպքերը՝ հետազոտության շրջանակներում մշակվել են պետական դատավաճանության մեխանիզմի տիպային հինգ մոդելներ, որոնք, իրենց էությամբ ու դրսևորման բնույթով պայմանավորված նպատակաուղղված են ոչ միայն այս տեսակ հանցագործությունների քննության օրինաչափությունների բացահայտմանը, դրանց պլանաչափ կազմակերպմանն ու արդյունավետության բարձրացմանը, այլ նաև դրանց կատարմանը նպաստող հանգամանքների վերհանմանը: Ընդ որում, մշակվել է նաև դրանց բացառմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ոլորտային շրջանակը, որոնք դասակարգված են ըստ բնագավառների, ինչն էլ իր հերթին նպաստում է առավել թիրախային կազմակերպել այս տեսակ հանցագործությունների կանխարգելումը:

4. Պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով առանձնահատուկ նշանակություն ունեն այս հանցակազմի հատկանիշների շրջանակներում պարզաբանման ենթակա հագամանքների որոշակիացումը և դրանց պարզաբանմանն ուղղված ակտիվ գործողությունների ձեռնարկումը: Հետազոտության շրջանակներում մշակվել են պետական դավաճանության քննության դեպքում պարզաբանման ենթակա հանգամանքների դասակարգման չափանիշներ, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Ըստ այդմ՝ պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակը պայմանականորեն դասակարգվել է հիմնական և լրացուցիչ կամ պարտադիր և ֆակուլտատիվ տեսակների, ինչպես նաև առանձնացվել են դրանց երեք հիմնական պարզ, բարդ, խառը խմբեր՝ հիմք ընդունելով դրանց քրեաիրավական և կրիմինա-

լիստիկական բնութագրերի հիմնական տարրերը: Բանն այն է, որ քննարկվող հանցագործությունն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հարաբերականորեն ինքնուրույն չորս արարքների կատարմամբ, ուստի, բացի պետական դավաճանության հանցակազմը բնութագրող ընդհանուր հատկանիշներից, յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է պարզաբանել նաև օբյեկտիվ կողմի այն հատկանիշները, որոնք բնորոշ են դրսևորման միայն այդ եղանակին և ոչ բոլոր դեպքերում են պարզաբանման ենթակա:

Ինչ վերաբերում է մյուս երեք հիմնական խմբերին, ապա դրանք դասակարգվել են ըստ ոտնձգության անմիջական օբյեկտների հատկանիշների՝ ընդհանուրից մասնավոր տրամաբանական սկզբունքը հիմք ընդունելով: Ըստ այդմ՝ *առաջին խմբի* մեջ մտնում են պետական դավաճանության այնպիսի դրսևորումները, որոնք բնույթով բարդ են ու բազմադրվագ և ոտնձգում են ընդհանուր առմամբ պետության անվտանգության դեմ ամենալայն իմաստով: Այլ կերպ՝ նման բազմադրվագ ոտնձգությունները որպես կանոն ունեն հասարակական վտանգավորության առավել բարձր աստիճան, կատարվում են կազմակերպված հանցավոր խմբերի կողմից և առաջացնում են առավել ծանր հետևանքներ: *Երկրորդ խումբն* իր մեջ միավորում է դավաճանական այնպիսի գործողությունների կատարումը, որոնք թեև իրենց բնույթով միատարր չեն, այնուամենայնիվ ակնհայտ է, թե որոշակիորեն որ անմիջական օբյեկտներին են ուղղված: Ինչ վերաբերում է *երրորդ խմբին,* ապա պետք է նշել՝ անվիճելի է այն փաստը, որ հասարակական հարաբերությունների վերը նշված խմբերը ՀՀ ՔՕ 418-րդ հոդվածով նախատեսված հանցագործության այլընտրանքային և հարաբերականորեն ինքնուրույն օբյեկտներ են: Հետևաբար՝ պետական դավաճանության հանցակազմի առկայության համար բավական է հաստատել հարաբերությունների նշված խմբերից առնվազն մեկի, հասարակական և պետության շահերի բնագավառներից որևէ մեկի նկատմամբ ոտնձգության առկայությունը, օրինակ՝ պետության պաշտպանունակությանը:

5. Քննության առջև ծառացած խնդիրների լուծման հաջորդականությունը և հնարավորությունը մեծապես կախված են սկզբնական քննչական իրադրությունից, այսինքն՝ իրավիճակից, որից սկսվում է քննությունը: Հետազոտության շրջանակներում հիմնավորվում է, որ տիպային քննչական իրավիճակներն ունեն տեղեկատվական և կազմակերպամեթոդական հիմնարար նշանակություն պետական դավաճանության քննության մեթոդիկայի որոշակիացման համար: Պետական դավաճանության քրեական վարույթներով առանձնակի կարևորվում է քննության նախնական փուլը, քանի որ հենց այդ փուլում է կատարվում մեծածավալ աշխատանք՝ ապացույցների որոնման, հայտնաբերման և ամրագրման, ինչպես նաև հանրավտանգ հետևանքների հնարավոր էսկալացիան կանխելու ուղղությամբ: Այդ խնդիրների լուծման

համար անհրաժեշտ է կատարել վարութային, գաղտնի քննչական գործողություններ, ՕՀՄ-ներ, ինչպես նաև՝ այլ միջոցառումներ, որոնց հերթականությունը կախված է տվյալ քննչական իրավիճակից:

Պետական դավաճանության վերաբերյալ սկզբնական նյութերի բնույթով ու ծավալով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել հետևյալ երկու տիպային քննչական իրավիճակները.

Իրավիճակ 1. Հանցանքի կատարման մեջ կասկածվող անձը ձերբակալվել է պետական դավաճանության հատկանիշներ պարունակող ապօրինի գործողություններ կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

Իրավիճակ 2. Քրեական վարույթը նախաձեռնված է այն տեղեկության հիման վրա, ըստ որի՝ անձը հաղորդակցվում է ՀՀ ՔՕ 418-րդ հոդվածով նախատեսված դավաճանական գործողություններ պոտենցիալ կատարող անձանց հետ:

Պետական դավաճանության վերաբերյալ քրեական վարույթների նախաձեռնման փուլից սկսած՝ անհրաժեշտ է ուղղակիորեն հարմարեցնել քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությունը վերը նշված քննչական իրավիճակներին, որի դեպքում էապես կբարձրանա նաև նախաքննության արդյունավետությունը:

6. Պետական դավաճանության քննության ու բացահայտման համար առանցքային նշանակություն ունի քրեական վարույթի նախաձեռնման փաստական և իրավական հիմքերի տեխնոլոգիական ու մարտավարական համադրումը՝ նկատի ունենալով, որպես կանոն, դրան նախորդող փուլում հետախուզական և հակահետախուզական ուղղություններով իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման հեռանկարները: Միևնույն ժամանակ պետական դավաճանության, այդ թվում՝ լրտեսության դրսևորման մեխանիզմի մեջ հնարավոր է առանձնացնել որոշակի օրինաչափություններ, որոնք, իրենց հերթին, հատկապես կարևորվում են քրեական վարույթի նախաձեռնման և քննության սկզբնական փուլի համար:

Նման իրավիճակում հաշվի առնելով քննարկվող հանցակազմի հատկանիշներով քրեական վարույթների առանձնահատկությունները՝ հետազոտության շրջանակներում ընդհանրացվել են այն մարտահրավերները, որոնց առերեսվում է վարույթն իրականացնող մարմինը դրանց քննության ժամանակ:

7. Ատենախոսությամբ կատարված հետազոտության արդյունքում կարևորվել է այն, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված վարույթների արդյունավետ քննության գլխավոր նախապայմաններից է քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համատեղ աշխատանքների տեխնոլոգիապես համակարգված կազմակերպումը: Այս իմաստով հատկանշական է

փոխգործողության շարունակական ապահովումն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այն մարմնի ու ստորաբաժանումների հետ, որոնք ներգրավված են եղել հետախուզական և հակահետախուզական ուղղություններով իրականացված աշխատանքներին, իսկ դրանց արդյունքների անընդհատականությունն ու քրեադատավարական հեռանկարն ապահովելու նպատակով հնարավորինս անհապաղ ձեռնամուխ լինել գաղտնի քննչական գործողությունների իրականացմանը: Այս համատեքստում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ հավասարապես կարևորվում են ինչպես արտագերատեսչական, այնպես էլ ներգերատեսչական համակարգման կազմակերպումը, քանի որ այդ գործընթացին ներգրավված մասնագիտացված տարբեր մարմինների ու սուբյեկտների գործունեությունը ուղղված է մեկ ընդհանուր նպատակի իրագործմանը:

8. Ատենախոսությամբ կատարված հետազոտության արդյունքում կարևորելով այն, որ պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի քննության արդյունավետությունն էապես պայմանավորված է քննության տարբեր փուլերի խնդիրների հստակեցմամբ՝ այդ խնդիրների համատեքստում մասնավորապես ուշադրության է արժանացել քննչական և գաղտնի քննչական գործողությունների ճիշտ համադրության կազմակերպումը, ինչն այս տեսակ հանցագործությունների քննության ու ապացուցողական զանգվածի ձևավորման առանցքն է կազմում: Ընդ որում, հիմնավորվում է ոչ միայն պետական դավաճանության քննության ընթացքում օրինաչափորեն կատարվող գաղտնի քննչական գործողությունների շրջանակը, դրանց տակտիկատեխնոլոգիական հնարավոր կոմբինացիաները, այլ նաև բացահայտվում են դրանց նախաձեռնման համար կիրառելի բացառիկ կանոնները՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում արձանագրված իրավական դիրքորոշումների համատեքստում:

9. Պետական դավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմի դրսևորման առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանց քննությանը բնորոշ օրինաչափություններից է ապացուցողական տեղեկատվության հնարավոր դեֆիցիտը՝ այն հաշվով, որ դավաճանական գործողությունների առանձին դրվագներ, օրինակ՝ օտարերկրյա հատուկ ծառայությունների կամ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները, հավաքագրումները, տեղեկությունների փոխանցումը և այլն, տեղի են ունեում օտարերկրյա պետության իրավազորության տարածքներում, որոշ դեպքերում՝ դիվանագիտական քողարկման կամ այլ հովանու ներքո, ուստի նման պայմաններում միանգամայն պակաս արդյունավետ, իսկ երբեմն էլ անհնարին են դառնում տեղում վարութային գործողությունների կատարումը, փաստական տվյալների ստացումը: Ատենախոսությամբ կատարված հետազոտության արդյունքում նախ որոշակիացվել է պետական դավաճանության

քննության յուրաքանչյուր փուլին բնորոշ վարութային գործողությունների շրջանակը, ապա այդ հենքի վրա միասնական տրամաբանությամբ ներկայացվել են դրանցից յուրաքանչյուրի կատարման տակտիկատեխնոլոգիական առանձնահատկությունները, որոնք ամբողջացնում են մարտավարական հնարքների ողջ զինանոցը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների նշանակությունն առաջին հերթին այն է, որ հայրենական կրիմինալիստիկայի գիտության մեջ առաջին անգամ մշակվել է պետական դավաճանության քննության մեթոդիկային վերաբերող գործնական խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է կրիմինալիստիկական մեթոդիկային, տակտիկային, օպերատիվ-հետախուզական գործունեության ու քննության կազմակերպման ինստիտուտին առնչվող խնդիրների ուսումնասիրությանը: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության մեջ, ինչպես նաև նպաստել իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև պետական դավաճանությունների քննության թեմաներով մեթոդական ցուցումների, գործնական ձեռնարկների մշակման համար, ինչպես նաև այդ տեսակի հանցագործությունների քննության ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում, որտեղ կատարվել են աշխատանքի քննարկումը և գրախոսությունը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկուցումների և ամբիոնում կազմակերպված գիտական հաղորդումների, ինչպես նաև ՀՀ Ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի վերապատրաստման ծրագրերի շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և գիտագործնական խնդիրներով, ինչպես նաև շարադրման տրամաբանությամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից՝ յուրաքանչյուրում երեքական պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Պետական դավաճանության կրիմինալիստիկական էությունը»** վերտառությամբ **առաջին գլուխը** բաղկացած է երեք պարագրաֆներից:

«Պետական դավաճանության քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում վերլուծվել են պետական դավաճանության հանցակազմի տարրերը, հստակեցվել է դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը, ինչպես արարքի ճիշտ որակման, քրեական պատասխանատվության անխուսափելիության, այնպես էլ դրանց քննության լիարժեքության և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Ըստ այդմ՝ հիմնավորվել է, որ պետական դավաճանության համար քրեական պատասխանատվություն սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի դիսպոզիցիայի ձևակերպումը լրացման կարիք ունի:

«Պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագիրը» վերտառությամբ 1.2 պարագրաֆում քննարկվել է այս տեսակ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի կառուցվածը, վեր հանվել և վերլուծվել են դրա բոլոր տարրերը, դրանց փոխադարձ կապը միմյանց հետ, ինչպես նաև դրանց նշանակությունը քննության արդյունավետ կազմակերպման և իրականացման համար Այս համատեքստում կարևորվել են դրանց դրսևորման կրիմինալիստիկական մեխանիզմի օրինաչափություններն ու բնութագրական առանձնահատկությունները:

«Պետական դավաճանության մեխանիզմի տիպային մոդելները» վերտառությամբ 1.3 պարագրաֆում նախորդ պարագրաֆների շարադրանքի հիման վրա քննարկվել են պետական դավաճանության դրսևորման հանցավոր մեխանիզմի տարրերն ու առանձնահատկությունները, որի արդյունքում մշակվել են տիպային հինգ մոդելներ, որոնք հնարավորություն են տալից ոչ միայն արդյունավետ կազմակերպել դրանցից յուրաքանչյուրի քննության գործընթացը, այլև՝ ավելի կանխատեսելի դարձնել ապացուցման գործընթացը: Ըստ այդմ՝ առանձնացվել են հետևյալ ժամանակակից տիպային մոդելները.

- ✓ *Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն ունեցող անձի կողմից:*

- ✓ *Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն չունեցող անձի կողմից:*
- ✓ *Պետական դավաճանությունը կատարվում է զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կողմից, սակայն այն չի դրսևորվում որպես թշնամու կողմն անցելը:*
- ✓ *Պետական դավաճանությունը կատարվում է օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցչի հետ տարբեր եղանակներով պարբերաբար հաղորդակցելով:*
- ✓ *Պետական դավաճանությունը կատարող անձը հանցանքը կատարելու համար օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցչի կողմից տարբեր եղանակներով վարձատրություն է ստանում:*

Ընդ որում, ներկայացված տիպային մոդելների վերացարկման արդյունքում մշակվել են կոնկրետ հանձնարարականներ դրանց կատարմանը նպաստող պայմանների վերացման ուղղությամբ:

Երկրորդ գլուխը՝ «Պետական դավաճանության քննության սկզբնական փուլի առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

«Պետական դավաճանության քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքները» վերտառությամբ 2.1 պարագրաֆում բացահայտվել է տվյալ քրեական վարույթներով ապացուցման առարկայի սահմանները, դրա բովանդակությունը կազմող ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ կամ ոչ պարտադիր տարրերի համակարգը: Բացահայտվել և վերլուծվել են նաև տվյալ հանցակազմի օբյեկտի, ինչպես նաև օբյեկտիվ կողմը կազմող արարքներից յուրաքանչյուրի դեպքում քննության սահմանների օրինաչափությունները: Իրականացված հետազոտության արդյունքում փաստվել է, որ պետական դավաճանության քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքների համակարգը բազմաշերտ է և յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է այն բանաձևել մշակված տիպային մոդելներով և մոդելավորել կատարվելիք ապացուցողական գործողությունների ալգորիթմը:

«Պետական դավաճանության քննության պլանավորումն ըստ քննչական իրադրությունների» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել են պետական դավաճանության քննությանը բնորոշ տիպային իրադրությունները և դրանցից յուրաքանչյուրի պայմաններում քննության պլանավորման առանձնահատկությունները: Հետազոտության շրջանակներում հիմնավորվում է, որ տիպային քննչական իրավիճակներն ունեն տեղե-

կատվական և կազմակերպամեթոդական հիմնարար նշանակություն պետական դավաճանության քննության մեթոդիկայի որոշակիացման համար, ուստի պետական դավաճանության վերաբերյալ քրեական վարույթների նախաձեռնման փուլից սկսած՝ նպատակահարմար է քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությունը կազմակերպել վերը նշված քննչական իրավիճակները նկատի ունենալով, որի դեպքում էապես կբարձրանա նաև նախաքննության արդյունավետությունը:

«Պետական դավաճանության քննության ընթացքում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության հիմքերն ու տեխնոլոգիան» վերտառությամբ 2.3 պարագրաֆում քննարկվել են քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների համատեղ աշխատանքի առանցքային հիմնահարցերը և տեխնոլոգիան, ինչպես նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում հանձնարարություններ տալու, այնպես էլ՝ վարույթ նախաձեռնելու նպատակով հաղորդում ներկայացնելու համատեքստում: Միաժամանակ վերլուծվել են փոխգործողության կազմակերպման արդյունավետ եղանակները, ինչպես նաև հիմնավորվել է նույն ստորաբաժանման հետ փոխգործողությունը շարունակելու կարևորությունը: Ուսումնասիրության արդյունքում ընդգծվել է նաև օպերատիվ տարբեր ստորաբաժանումների միմյանց հետ ընդհանուր մարտավարությամբ աշխատելու կարևորությունը ապացուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման համատեքստում:

Երրորդ գլուխը՝ «Պետական դավաճանության քննության ընթացքում իրականացվող ապացուցողական գործողությունների տակտիկատեխնոլոգիական առանձնահատկությունները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Քննչական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները» վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել քննչական գործողությունների տակտիկական պայմաններին, որոնք բնորոշ են քննության որոշակի փուլին, ապա քննչական ժամանակակից փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա վեր են հանվել այն քննչական գործողությունների շրջանակը, որոնք առավել բնորոշ են պետական դավաճանության քննությանը, հատկապես սկզբնական փուլում: Ըստ այդմ՝ առանձին-առանձին վերլուծվել են դրանցից յուրքանչյուրի տակտիկական զինանոցը, կատարման յուրահատուկ պայմանները ինչպես դրանց կազմակերպական, այնպես էլ՝ քրեատավարական տեսանկյուններից՝ հիմք ընդունելով նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան: Ընդ որում, տակտիկական տեսանկյունից բացահայտվել և վերլուծվել են այն հնարքները, որոնք բնորոշ են կոնկրետ քննչական գործողությանն առավելապես պետական

դավաճանության քննության տարբեր փուլերում:

«Գաղտնի քննչական գործողությունների կատարման տեխնոլոգիան» վերտառությամբ 3.2 պարագրաֆում քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պրակտիկայի վերլուծության արդյունքում բացահայտվել է գաղտնի քննչական գործողությունների համակարգը, որոնք բնութագրական են այս տեսակ հանցագործությունների քննությանը: Քննարկվել է դրանցից յուրաքանչյուրի կատարման տեխնոլոգիան պետական դավաճանության քննության համատեքստում, վեր են հանվել այն առանձնահատկություններն ու մարտահրավերները, որոնք տիպային են տվյալ քրեական վարույթներին: Հիմնավորվել է նաև դրանց համատեղ կամ միաժամանակյա կատարման անհրաժեշտությունն ապացուցողական զանգվածի ձևավորման, ինչպես նաև ստացված արդյունքներով՝ քննչական գործողությունների նախապատրաստման ու իրականացման տեսանկյունից:

«Փորձաքննությունների կատարման տեխնոլոգիական առանձնահատկությունները» վերտառությամբ 3.3 պարագրաֆում վերլուծվել է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով հատուկ գիտելիքների կիրառման հնարավորությունները պետական դավաճանության քնության ընթացքում: Վերլուծության ընթացքում հիմնավորվել է, որ հատուկ գիտելիքների կիրառման արդյունավետ ձևերից է փորձաքննության նախաձեռնումն ու կատարումը՝ նկատի ունենալով դավաճանական գործողությունների մեխանիզմն ու հետքառաջացման առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ քննչական ու փորձագիտական պրակտիկայի հաշվառմամբ առանձնացվել են փորձաքննությունների այն հիմնական տեսակները, որոնք կատարվում են այս տեսակ հանցագործություններ քննելիս: Ուսումնասիրության արդյունքում, նկատի ունենալով ժամանակակից փորձը և տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներգրավումը դավաճանական գործողությունների մեխանիզմում, հատուկ կարևորվել է համակարգչային բնագավառի փորձաքննությունների հնարավորություններն ու դրանցով լուծվող հարցերի նշանակությունը ապացուցողական զանգվածի ձևավորման և քննության արդյունավետության ապահովման գործում:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները:

1. Պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնվող քրեական վարույթների ընթացքում պետք է ուշադրություն դարձվի դրա նյութաիրավական, քրեադատավարական և կրիմինալիստիկական բաղադրիչներին՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և դրանց դեմ արդյունավետ պայքար մղելու պետության պարտավորությունը: Ըստ այդմ՝ պետական դավաճանության քննության արդյունավետության

բարձրացման տեսանկյունից ժամանակի հրամայական է պետական դավաճանության հանցակազմի վերանայումը, ինչը միևնույն ժամանակ կնպաստի լուծելու իրավակիրառ պրակտիկայում առկա բացերը և հրատապ խնդիրները: Այս իմաստով, *inter alia,* անհրաժեշտ է ՀՀՔՕ-ի 418-րդ հոդվածի դիսպոզիայի ձևակերպման մեջ սահմանել թշնամի հասկացությունը, ինչպես նաև պատասխանատվություն նախատեսել ոչ միայն պետական գաղտնիք պարունակող, այլ նաև այդպիսին չհամարվող տեղեկության հանձնման կամ այդ տեղեկությանը օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությանը կամ դրա ներկայացուցչին ծանոթանալու համար պայման ստեղծելու համար:

Նման ձևակերպման պայմաններում պետական դավաճանության քննության ընթացքում հնարավոր կլինի դավաճանական գործողությունների բոլոր դրվագներում ներգրավված անձանց ենթարկել քրեական պատասխանատվության՝ բացառելով օրենսդրական տարընմբռնումներն ու մեղավոր անձանց պատասխանատվությունից խուսափելը:

2.Պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրի ամբողջական վերլուծության արդյունքում կարող ենք պնդել, որ այն ունի միանգամայն բարդ կառուցվածք. Ընդգրկում է այնպիսի տվյալներ, որոնք պայմանականորեն կարող ենք դասակարգել երկու խմբի՝ *օբյեկտիվ և սուբյեկտիվ:*

Առաջին խմբի մեջ մտնում են տվյալ տեսակի հանցագործության օբյեկտը և օբյեկտիվ կողմը բնութագրող տվյալները, որոնք են՝

- այն հասարակական հարաբերությունների և անմիջական օբյեկտների շրջանակը, որոնց դեմ կատարվել է ոտնձգությունը,
- դրա կատարմանը նպաստող տիպային պայմանների վերաբերյալ տվյալները,
- դրա իրականացման որոշակի տիպային հանգամանքների (տեղի, ժամանակի, իրադրության) վերաբերյալ տվյալները,
- տվյալ տեսակի հանցանքի կատարման և քողարկման տիպային միջոցների վերաբերյալ տվյալները և դրանց օգտագործման տիպային հետևանքները:

Երկրորդ խմբի մեջ մտնում են տվյալ տեսակի հանցագործության սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող տվյալները, որոնք են՝

- հավանական հանցագործի անձի և հանցագործության հավանական շարժառիթների և նպատակների վերաբերյալ տվյալները,
- հավանական տուժողի անձի և հանցագործության տիպային առարկայի վերաբերյալ տվյալները:

Դժվար չէ նկատել նաև, որ վերոգրյալում արտահայտված են բոլոր այն տիպային հանգամանքները, որոնք ենթակա են պարզաբանման պետական դավաճանության քննության ընթացքում:

3. Չնայած ՀՀ ՔԴՕ-ի 102-րդհոդվածով սահմանված են ցանկացած

քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը, այդուհանդերձ պետական դավաճանության քննության ժամանակ դրանք այլ իմաստ ու բովանդակություն են ստանում՝ կախված հետևյալ հանգամանքներից՝

ա) դավաճանական գործողությունների դրսևորման կրիմինալիստիկական մեխանիզմից կամ հանցակազմի օբյեկտիվ կողմի կոնկրետ հատկանիշներից,

բ) հանցակազմի անմիջական օբյեկտի կամ օբյեկտների բնույթից:

Ըստ այդմ՝ դրանք պայմանականորեն կարող են դասակարգվել երկու խմբի՝

1. *հիմնական և լրացուցիչ կամ պարտադիր և ֆակուլտատիվ,*

2. *պարզ, բարդ կխառը:*

Թեև նման դասակարգումը կրում է պայմանական բնույթ, քանի որ դրանք կարող են համատեղվել, այդուհանդերձ այն հնարավորություն է տալիս ոչ միայն առավել թիրախային ուսումնասիրել այս տեսակ հանցագործությունների քննության հիմնախնդիրները, այլ նաև գործնական տեսանկյունից առավել արդյունավետ կազմակերպել և պլանավորել դրանց քննության գործընթացը:

4. Պետական դավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմով պայմանավորված՝ քննչական իրադության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ տակտիկական տեսանկյունից նպատակահարմար է քրեական վարույթն իրականացնել քննչական խմբի կողմից, առանձնացնել դրվագները՝ ըստ դավաճանական գործունեությունների կազմակերպել համակարգված փոխգործողություն, այդ թվում՝ տվյալների պարբերաբար փոխանակում ինչպես քննչական խմբի անդամների, այնպես էլ ՕԳՀ իրականացնող մարմինների միջև:

5. Պետական դավաճանության քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի ուսումնասիրումն ինքնանպատակ չէ. ի թիվս այլնի, դրանք յուրատեսակ հիմնաքար են պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի էության բացահայտման համար: Ընդ որում, այդ հենքի վրա դրա դրսևորման մոդելների տիպային առանձնացումը հնարավորություն է տալիս վեր հանելու ոչ միայն այնպիսի օրինաչափություններ, որոնք նպաստում են այս տեսակ քրեական վարույթներով ապացուցման գործընթացի պլանավորված ու կազմակերպված իրականացմանը, այլ նաև՝ դրանց կանխմանն ու խափանմանը:

Ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի դրսևորման 5 տիպային մոդելներ:

№ 1. Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն ունեցող անձի կողմից:

№ 2. Պետական դավաճանությունը կատարվում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ անմիջականորեն առնչություն չունեցող անձի կողմից:

№ 3. Պետական դավաճանությունը կատարվում է զինվորական ծառայության մեջ գտնվող անձի կողմից, սակայն այն չի դրսևորվում որպես թշնամու կողմն անցելը:

№ 4. Պետական դավաճանությունը կատարվում է օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցչի հետ տարբեր եղանակներով պարբերաբար հաղորդակցելով:

№ 5. Պետական դավաճանությունը կատարող անձը հանցանքը կատարելու համար օտարերկրյա պետության հատուկ ծառայությունների կամ միջազգային կազմակերպության կամ դրանց ներկայացուցչի կողմից տարբեր եղանակներով վարձատրություն է ստանում:

Ներկայացված մոդելների վերլուծության արդյունքում էլ հնարավոր է մշակել դրանց կանխմանն ուղղված միջոցառումների շրջանակը, որոնք հիմնականում իրականացվում են հանրային իրազեկման, քրեական արդյունավետ քաղաքականության, պետական գաղտնիքի պահպանության, հակահետախուզական գործունեության ուղղություններով, ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական հիմնարկներում ու հաստատություններում:

6. Պետական դավաճանության դեպքերի բացահայտման և քրեական վարույթի նախաձեռնման տեսանկյունից անխուսափելի է ազգային անվտանգության մարմինների ներգերատեսչական փոխգործողությունը, քանի որ պետական դավաճանությունների կատարման մեխանիզմի քողարկված բնույթը պահանջում է օպետատիվ-հետախուզական և օպերատիվ տեխնիկական ստորաբաժանումների համակարգված աշխատանք: Ընդ որում, նպատակահարմար է, որ պետական դավաճանության առերևույթ դեպքերով վարույթ նախաձեռնվելու պարագայում վարույթն իրականացնող մարմինը փոխգործողությունը շարունակի այն բացահայտած, ինչպես նաև հաղորդում ներկայացրած հետաքննության մարմնի հետ, քանի որ վերջիններս առավել տեղեկացված են դեպքի մանրամասներին և քննչական հանձնարարությունների շրջանակներում ավելի լավ կարող են կանխատեսել հետագա հնարավոր զարգացումները, պարզել դեպքին հնարավոր առնչություն ունեցող անձանց շրջանակը, պատճառված վնասի իրական բնույթն ու չափը և այլն:

7. Պետական դավաճանության քննության տեսանկյունից քննչական գործողությունները կարելի է դասակարգել հետևյալ երկու խմբի՝

ա) քննչական գործողություններ, որոնք որպես կանոն կատարվում են առաջնահերթորեն այն տվյալների հիման վրա, որոնք ստացվել են օպերատիվ-հետախուզական ճանապարհով,

բ) քննչական գործողություններ, որոնց գլխավոր նպատակը հավաքված ապացույցների ստուգումն է, որոնց իրականացման համար հիմք կարող են դառնալ միայն դատավարական միջոցներով ստացվող տվյալները:

Ըստ այդմ՝ պետական դավաճանության քննության հատկապես սկզբնական փուլին բնորոշ են հետևյալ ապացուցողական գործողությունները.

- *դեպքի վայրի և փաստաթղթի ու առարկաների զննումը,*
- *բնակարանի և թվային խուզարկությունը,*
- *առգրավումը,*
- *տեղեկատվության պահանջը,*
- *ծերբակալվածի, մեղադրյալի և վկաների հարցաքննությունը,*
- *փորձաքննությունը:*

Վերը թվարկածը, անշուշտ, տիպային նշանակություն ունի և ամենևին էլ չի նշանակում, որ քննության որոշակի փուլում չեն կարող կատարվել այլ քննչական գործողություններ՝ կախված ձևավորվող քննչական իրադրությունից:

8. Պետական դավաճանության քննության ընթացքում ապացուցողական զանգվածի ձևավորման համար առանցքային նշանակություն ունեն գաղտնի քննչական գործողությունների կատարման արդյունքները: Պետական դավաճանության քննությանը հիմնականում բնորոշ են գաղտնի քննչական գործողությունների հետևյալ տեսակները.

1) ներքին դիտումը.

2) արտաքին դիտումը.

3) նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը.

4) թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը.

5) ֆինանսական գործարքների վերահսկումը.

Ընդ որում, պետական դավաճանության կրիմինալիստիկական մեխանիզմի և դրանով պայմանավորված՝ ձևավորվող քննչական իրադրության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարևորվում է դրանց համակարգը ճիշտ ժամանակին կատարումը: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ժամանակահատված, որի ընթացքում անձն առավել հավանական է, որ կցուցաբերի ակտիվ ու նախաձեռնող վարքագիծ, կապեր կհաստատի տարբեր անձանց հետ կամ կիրականացնի որոշակի տեղեկատվության փոխանակում: Բացի դրանից, հարկ է առավելագույն օգտագործել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշ գործերով [*Սեպուհ Թադևոսյանի և Միրուն Նաջարյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15, ՕՀՄ-56/12 10.2023 դատական գործով 2024 թվականի հոկտեմբերի 18-ի, թիվ 20/01.12.2023 դատական գործով 2024 թվականի նոյեմբերի 22-ի որոշումներով*] արտահայտած իրավական դիրքորոշումներն օպերատիվ կերպով գաղտնի քննչական

գործողություններ նախաձեռնելու համար՝ հնարավորինս ապահովելով իրականացված օպերատիվ-հետախուզական և հակահետախուզական միջոցառումների արդյունքների անընդհատականությունն ու բնականոն ընթացքը քրեական վարույթում:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Ս. Բաղինյան, «Основная характеристика совершения государственной измены», «Դատական իշխանություն», թիվ (10-12), Երևան, 2023, 170-176 էջեր:
2. Ս. Բաղինյան, «Основные обстоятельства, подлежащие установлению при расследовании государственной измены», «Բանբեր արդարադատության ակադեմիայի», թիվ 1(11), Երևան, 2024, 110-119 էջեր:
3 Ս. Բաղինյան, «Типичные следственные ситуации при расследовании государственной измены», «Դատական իշխանություն», թիվ (1-3), Երևան, 2024, 129-138 էջեր:
4. Ս. Բաղինյան, «Պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի դրսևորման որոշ առանձնահատկություններ», «Բանբեր արդարադատության ակադեմիայի», թիվ 2(12), Երևան, 2024, 131-136 էջեր:
5. Ս. Բաղինյան, «Փաստաթղթերի քննչական զննության առանձնահատկությունները պետական դավաճանության գործերով քրեական վարույթների քննության ընթացքում», «Դատական իշխանություն», թիվ (4-6), Երևան, 2024, 79-88 էջեր:
6. Ս. Բաղինյան, «Պետական դավաճանության քննության փուլերի խնդիրներն ու առանձնահատկությունները», «Դատական իշխանություն», թիվ (10-12), Երևան, 2024, 72-81 էջեր:
7. Ս. Բաղինյան, «Պետական դավաճանության հանցավոր մեխանիզմի տիպային մոդելները», «Դատական իշխանություն», թիվ (1-3), Երևան, 2025, 135-150 էջեր:
8. Ս. Բաղինյան, «Քրեական վարույթ և օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների փոխգործողության տակտիկատեխնոլոգիական հիմքերն ու առանձնահատկությունները պետական դավաճանության քննության ընթացքում», «Դատական իշխանություն», թիվ (1-3), Երևան, 2026, 157-171 էջեր:

СУРЕН САРГИСОВИЧ БАГИНЯН

ОССОБЕННОСТИ МЕТОДИКИ РАССЛЕДОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ИЗМЕНЫ

Актуальность темы диссертации обусловлена тем, что в современных геополитических условиях, особенно в регионе, преступления, составляющие государственную измену, представляют большую общественную опасность, поскольку посягают на конституционный строй и национальную безопасность государства, тем самым подрывая обороноспособность страны.

Несмотря на наличие ограниченного числа научных исследований в специальной юридической литературе, посвящённых вопросам уголовно-правовой защиты конституционного строя и государственной безопасности, криминалистический аспект данной проблематики по-прежнему остаётся в сфере научного интереса. В настоящее время, особенно в армянской специальной юридической литературе, наблюдается заметный дефицит комплексных научных исследований, посвящённых методике расследования преступлений, связанных с государственной изменой, её совершенствованию, а также системному и всестороннему изучению данной проблематики. Данное обстоятельство приобретает ещё более существенное значение с учётом того, что расследование уголовных дел данной категории осуществляется исключительно в закрытом режиме, что исключает возможность для исследователей получать полный доступ к процессуальным материалам, всесторонне изучать следственную практику и разрабатывать обоснованные методические рекомендации.

Тем не менее как в теоретическом, так и в практическом плане существует настоятельная необходимость проведения углублённых исследований, направленных на разработку комплексной методики расследования преступлений, связанных с государственной изменой, особенно с учётом заметного роста числа таких преступлений в Республике Армения в последние годы. Цель исследования заключается в системном изучении и анализе расследования преступлений, связанных с государственной изменой, выявлении и рассмотрении соответствующих теоретических и практических проблем, а также в разработке на основе результатов комплексного исследования научно обоснованных предложений, направленных на совершенствование законодательства и правоприменительной практики, а также рекомендаций, ориентированных на дальнейшее развитие и совершенствование методики расследования.

Научная новизна исследования заключается в том, что оно представляет собой первое комплексное и целостное научное исследование в армянской юридической науке, в котором предпринята попытка максимально системно и многогранно рассмотреть и проанализировать теоретические и практические вопросы, связанные с криминалистическими аспектами института государственной измены.

Впервые на уровне диссертационного исследования рассмотрены и проанализированы особенности координации и взаимодействия между правоохранительными органами при расследовании преступлений, в том числе с точки зрения разработки соответствующей отраслевой методики. На основе проведённого исследования сформулированы теоретически обоснованные выводы, а также выдвинуты законодательные и практические рекомендации.

Объектом диссертационного исследования охватывает все структурные элементы, присущие частным криминалистическим методикам, с особым вниманием к выявлению их специфических особенностей при расследовании данной категории преступлений. На этой основе в исследовании сформулированы конкретные законодательные предложения, а также сделаны выводы, касающиеся уголовно-правовых и криминалистических характеристик государственной измены, структуры и моделей механизмов её совершения, планирования расследования, типичных следственных ситуаций, предмета доказывания, а также вопросов, относящихся к этапам расследования, включая специфическую систему процессуальных действий и оперативно-розыскных мероприятий, характерных для подобных уголовных производств.

Результаты анализа, представленные в диссертации, могут быть использованы в дальнейших научных исследованиях, а также в учебных курсах, предметом которых является изучение вопросов криминалистической методики, тактики, оперативно-розыскной деятельности и организационных аспектов следственной практики. Кроме того, выводы исследования и обоснованные в нём предложения могут быть применены в процессе законотворческой деятельности, а также способны способствовать совершенствованию и дальнейшему развитию правоприменительной практики.

Результаты исследования также могут быть использованы в качестве основы для разработки методических рекомендаций и практических пособий по расследованию преступлений, связанных с государственной изменой, а также применяться при расследовании данной категории уголовных правонарушений.

SUREN SARGIS BAGHINYAN

THE SPECIFICS OF THE METHODIC OF INVESTIGATION OF STATE TREASON

The relevance of the dissertation topic is determined by the fact that, under the current geopolitical circumstances, especially in region, crimes constituting state treason pose an even greater public danger, as they encroach upon the constitutional order and national security of the state, thereby undermining the country's defense capability.

Despite the existence of a limited number of academic studies in specialized legal literature that examine the issues of criminal-law protection of constitutional order and state security, the criminalistic aspect of the subject matter nevertheless continues to remain within the scope of scientific research interest. Currently, especially in Armenian specialized legal literature, there is a noticeable scarcity of comprehensive scientific studies dedicated to the methodology for investigating state treason offenses, the improvement thereof, and the systematic and multifaceted examination of the issue. This circumstance acquires even greater significance when taking into consideration that investigations of such categories of criminal cases are conducted exclusively in closed proceedings, thereby precluding researchers from obtaining full access to procedural materials, comprehensively studying investigative practices, and developing substantiated methodological recommendations.

Nevertheless, there is a pressing need, both in theory and in practice, to conduct in-depth research aimed at the development of an integrated methodology for the investigation of crimes of state treason, particularly in view of the notable increase in the incidence of such offenses in the Republic of Armenia in recent years.

The objective of the research is to conduct a systematic study and analysis of the investigation of state treason, to identify and examine the relevant theoretical and practical issues, as well as, on the basis of the findings obtained through complex research, to elaborate scientifically grounded proposals aimed at the improvement of legislation and law enforcement practice, as well as recommendations directed toward the further development and refinement of the investigative methodology.

The scientific novelty of the research is manifested in the fact that it represents the first comprehensive and integral scientific study within Armenian legal scholarship, in which an attempt has been made to examine and analyze, to the greatest possible extent, in a systematic and multidimensional manner,

the theoretical and practical issues related to the criminalistic aspects of the institution of state treason.

For the first time at the dissertation level, the study has addressed and analyzed the specific features of coordination and cooperation among law enforcement bodies in the investigation of crimes, including from the perspective of the development of an appropriate sectoral methodology. Based on the conducted study, theoretically substantiated conclusions have been formulated, as well as legislative and practical recommendations have been advanced.

The scope of the dissertation research encompasses all structural components inherent to criminalistic private methodologies, with particular attention to the identification of their specific features in the investigation of this category of crimes. On this basis, the study has resulted in the formulation of concrete legislative proposals, as well as in the derivation of conclusions concerning the criminal-legal and criminalistic characteristics of state treason, the structure and models of its manifestation mechanisms, investigative planning, typical investigative situations, the subject of proof, and issues pertaining to the stages of investigation, including the specific system of procedural actions and operational-search measures characteristic of such proceedings.

The results of the analyses presented in the dissertation may be utilized in future scientific research and in academic courses whose subject matter relates to the study of issues concerning criminalistic methodology, tactics, operational-search activities, and the organizational aspects of investigative practice. Furthermore, the research findings, together with the substantiated proposals advanced therein, may be applied in legislative drafting processes and are also capable of contributing to the improvement and further development of law enforcement practice.

The results of the research may also be utilized as a basis for the development of methodological guidelines and practical manuals concerning the investigation of state treason crimes, as well as be applied while investigating such categories of criminal offenses.